«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ընտանիքի հոգեբանություն, կոնֆլիկտներ (ընտանիք-դպրոց համագործակցությունը)

Առարկան՝ Պատմություն

Հետազոտող ուսուցիչ՝ Մերի Նորիկի Փանոսյան

Ուսումնական հաստատություն՝ Դիմիտրովի միջնակարգ դպրոց

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ……3

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ. *Ընտանիքի հոգեբանություն, կոնֆլիկտներ*……4

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ. *Ընտանիք-դպրոց համագործակցությունն ու մոդելը*……16

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ……20

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ընտանիքի հոգեբանության տեսողական դաշտում աչքի են ընկնում այնպիսի գիտության բնագավառներ ինչպիսիք են՝ ընտանեկան կյանքի ցիկլը, ամուսինների փոխհարաբերությունները, ծնողների և երեխաների փոխհարաբերությունները, ընտանիքի և հասարակության փոխհարաբերությունները: Ընտանիքի և հասարակության հետ կապն առանձնահատուկ նշանակություն ունի անձի զարգացման, նրա մարդկային ճակատագրի համար: Եվ պատահական չէ, որ բոլոր հասարակական ֆորմացիաները շահագրգիռ են ընտանիքի կյանքի բովանդակության և կառուցվածքի նկատմամբ:

Հետազոտական աշխատանքի նպատակն է ընտանիքի հոգեբանության վերլուծությամբ բացահայտել և գտնել ընտանիք-դպրոց համագործակցային կապը՝ իր առանձնահատկություններով և այդ համագործակցության խթանումը: Աշխատանքի ուսումնասիրման խնդիրներն են՝

1. Ինչպե՞ս է ազդում ընտանիքը աշակերտ-ուսուցիչ «լավ» կամ «վատ» համագործակցության վրա:
2. Ընտանիքի հոգեբանական մոդելի բացահայտմամբ ներկայացնել ընտանիք-աշակերտ-դպրոց կապը:
3. Պարզաբանել ընտանիքի մոդելի հիմքով ուսուցիչ- ծնող համագործակցության ուղղությունները:
4. Վերլուծել ուսուցչի կողմից ծնողների և երեխաների կարիքների հիման վրա մշակված ծրագրերը:
5. Ներկայացնել ուսուցիչ-ծնող փոխադարձ տեղեկատվության փոխանցման և քննարկման կարևորությունը:

Այսպես ուսուցիչների և ընտանիքի փոխներգործության բնույթը պլանավորված է դպրոցի նկատմամբ ծնողների վերաբերմունքով, ինչպես նաև այն հանգամանքով, թե վերջիններս, ըստ իրենց իմացական կարողությունների, հայացքների ու դիրքորոշումների, որտեղ են իրենց տեսնում դաստիարակության գործընթացում: Դպրոցի և ծնողների համագործակցության հիմքը խմբային ու անհատական աշխատանքի ձևերն են:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԸՆՏԱՆԻՔԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐ

Ընտանիքի հոգեբանությունը հոգեբանության բաժին է, որն ուսումնասիրում է ամուսնության և ընտանեկան հարաբերությունների էվոլյուցիան ու բնույթը, նրանց առաջացման յուրահատկությունները, ձևավորումը, կայունացումն ու քայքայումը, նկարագրում՝ ընտանեկան և ամուսնական հատկանիշների, ընտանիքի անդամների սոցիալ-հոգեբանական և ֆունկցիոնալ առանձնահատկությունները միմյանց հետ։

1960-1970-ական թվականներին՝ ամուսնությունն ու ընտանիքը հետազոտությունների առարկա դարձան մասնագետների, այդ թվում նաև հոգեբանների կողմից։ Սկզբում ընտանիքը ուսումնասիրվել է հոգեկան հիվանդությունների հետ կապված կանխարգելումը կամ ընտանիքի դաստիարակության թերությունները։ Ավելի ուշ, ընտանիքի հոգեբանության տեսողական դաշտում աչքի ընկան այնպիսի գիտության բնագավառներ ինչպիսիք են՝ ծնողների և երեխաների փոխհարաբերությունները, ընտանիքի և հասարակության փոխհարաբերությունները և այլն։

Ընտանիքի ձևավորման և զարգացման փուլերը։ Արդի ընտանիքների առաջացումը և հետագա գոյատևումը հետազոտողներն անվանում են «զարգացում» և ապա՝ փորձում առանձնացնել դրա որոշակի փուլեր։ Վիճելի համարելով ընտանիքի զարգացման անլուծելի խնդրի մասին տարբեր փուլերում առանձնացվող տեսակետը՝ գտնում ենք, որ այն լուրջ վերանայման կարիք ունի և այդ նպատակով առաջադրում ենք մի շարք դրույթներ.

1. Ընտանիքն իր գոյության ընթացքում անցնում է փոփոխությունների մի երկարատև գործընթաց, որը կարելի է բաժանել փուլերի (կամ շրջանների)։ Դիտարկելով բջջային ընտանիքի կյանքի ուղին՝ ստեղծվելու պահից մինչև նրա վերացումը(երբ ամուսինները մահանում են), կարելի է տեսնել փոփոխությունների մի ամբողջ շղթա։

2. Ամեն մի փոփոխություն չէ, որ կարելի է զարգացում համարել։ Որոշ փոփոխություններ, անկասկած, ունեն զարգացման բնույթ, բայց կան նաև ընտանիքի

կենսագործունեության այնպիսի փուլեր, որոնք կամ լրիվ հետընթաց (ռեգրեսիվ) բնույթ ունեն, կամ էլ պարունակում են քայքայման, հետաճի տարրեր։

3. Յուրաքանչյուր ընտանիք ունի ինչպես առաջադիմական զարգացման, այնպես էլ հետընթացի, քայքայման և ճգնաժամերի փուլեր։ Այդպիսին է իրականությունը, որը և պետք է արտացոլվի ընտանիքի հոգեբանության գիտական տեսության մեջ[1]։

Ընտանիքի ինստիտուտը ապահովում է հասարակական կայունությունն ու հանդիսանում է վերջինիս ինքնավերարտադրման հիմնական միջոցներից։ Ընտանիքը հասարակության ամենափոքր բջիջներից է, միևնույն ժամանակ այն սոցիալական կազմակերպության ամենատարածված տեսակն է։ Ընտանիքը նաև հասարակության հենասյուներից է և մարդկային հասարակության ամենաառանցքային սոցիալական ինստիտուտներից։ Ընտանիքի ձևավորման հիմքում ընկած է հասարակության նորմերի, դերերի և ստանդարտների յուրացումը։ Ընտանիքի ինստիտուտը հանդիսանում է հասարակագիտական այլ առարկաների ուսումնասիրության առարկան, ինչպես օրինակ՝ պատմության, ազգագրության, հոգեբանության, մարդաբանության համար։ Միջգիտական ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս պատկերացում կազմել ընտանիքի տարբեր կողմերի, հատկանիշների և գործառույթների մասին։ Ընտանիքի ինստիտուտը սերտորեն առնչվում է հասարակության մեջ առկա սովորույթների, վարքի կանոնների, սպասումների, օրենքների հետ։ Օրենսդրական առումով ընտանեկան հարաբերությունների կարգավորումը ևս կարևորագույն նշանակություն ունի ներկայումս։ Ընտանեկան իրավունքը սահմանում է, թե ինչ է ընտանիքը, ինչպիսին են ամուսնու և կնոջ, ծնողների և զավակների իրավունքներն ու պարտականությունները։ Ընտանիքը որպես սոցիալական ինստիտուտ տարբերվում է սոցիալական խմբերից, քանի որ սոցիալական խումբը բաղկացած է որոշակի հավասար իրավունքներ ու դիրք ունեցող անդամներից, մինչդեռ ընտանիքում կան մեկ, երբեմն էլ մի քանի սերունդների ներկայացուցիչներ, որոնց միջև ձևավորվող հարաբերությունները միատեսակ չեն[2]։

---

[1] Торохтий В. С., Психологическое здоровье семьи и пути его изучения долголетие // Вестник психосоциальной и коррекционно-реабилитационной работы, 1996, № 3, стр. 36-44.

[2] Սեդրակյան Ս., Ընտանիքի հոգեբանություն, Երևան, 2011, էջ 220։

Ընտանիքի և հասարակության հետ կապն առանձնահատուկ նշանակություն ունի անձի զարգացման, նրա մարդկային ճակատագրի համար: Չափազանցրած չենք լինի եթե պնդենք, որ ընտանիքը, դրա յուրաքանչյուր տեսակը քաղաքակրթության զարգացման էական ցուցանիշ է, հասարակության սոցիալ-հոգեբանական հայելին: Պատմականորեն ձևավորված խմբերի մեջ ընտանիքը, թերևս, ամենակայունն է և երկար ժամանակ կմնա այնպիսին, քանի դեռ այն լավագույն ձևով բավարարում է մարդկանց բազմաթիվ համադրված պահանջմունքները: Թեև որոշ հեղինակներ փութաջանորեն հայտարարում են ընտանիքի քայքայման, անգամ վերացման մասին, սակայն այսօր նկատելի է ընտանիքի զարթոնքի ու վերակազմության մի շրջան[3]: Հասարակությունը զարգանալով՝ ձգտում է իր վրա վերցնել ընտանիքի որոշ գործառույթներ, հնարավորինս թեթևացնել նրա բեռը, մյուս կողմից էլ ընտանիքին տալիս նոր դերեր:

Ընտանիքի, դրա հոգեբանական ժամանակակից հիմնախնդիրների էության առավել ամբողջական բացահայտման և մեթոդաբանական վերլուծության ուղղությամբ աներկբա է դերերի տեսության սկզբունքների և մոտեցումների գիտական արդյունավետությունը, երբ ընտանիքը դիտարկվում է որպես իր անդամների որոշակի կարգավիճակների և դերերի համակարգ, իսկ ժամանակի մեջ՝ որպես դրա փոխակերպումների ընթացք, այսինքն, եթե ընտանիքում անհատների դերերն ու փոխհարաբերություններն ինչպես են փոխակերպվում և գոյավորվում ավելի լայն միջավայր: Ընտանիքը, ինչպես գիտենք անձանց և նրանց փոխկապակցված կարգավիճակների ու դերերի ամբողջությունն է: Նկատի ունենանք նաև, որ գոյություն ունեն ոչ միայն ներընտանեկան, այլև միջընտանեկան կապեր: Դերային մոտեցման լիարժեք իրագործման համար անհրաժեշտ է նախ պարզել սոցիալական կարգավիճակների և դերերի էությունը:

Սոցիալական կարգավիճակի տեսակներն ու կառուցվածքը: Յուրաքանչյուր սոցիալական խմբում նրա անդամները գրավում են որոշակի կարգավիճակներ և դիրքեր: Ստանձնելով որոշակի կարգավիճակ՝ անձն այն պետք է իրագործի: Սոցիոլոգիայի և սոցիալական հոգեբանության բնագավառներում ընդունված է

[3] Սեդրակյան Ս.Ա., «Դերերի տեսությունը և ընտանիքի հոգեբանության խնդիրներին դերային մոտեցման էությունը», Երևան, 2010, էջ 10:

սոցիալական դերի սեղմ, սակայն բովանդակալից հետևյալ սահմանումը. Անձի սոցիալական դերը նրա համապատասխան կարգավիճակի իրագործումն է կամ անձի սոցիալական դերը նրա կարգավիճակի դինամիկան է ժամանակի ընթացքում: Թեև մեկ սահմանման մեջ հնարավոր չէ ընդգրկել այնպիսի բարդ ու բազմակողմանի երևույթնորի բոլոր կողմերը, ինչպիսիք են կարգավիճակն ու դերը, այդուամենայնիվ, վերոբերյալ սահմանումները կարող են ելակետային լինել ներխմբային փոխհարաբերությունների ուսումնասիրության և սոցիալական դերերի տեսության զարգացման համար: «Դիրք» ասելով պետք է հասկանալ տվյալ սոցիալական խմբում անձի ազդեցության աստիճանը: Նկատի է առնվում խմբում, այդ թվում ընտանիքում որևէ անձ կարող է պաշտոնական բարձր դիրք չունենալ, բայց ավելի ազդեցիկ լինել, քան այլ անդամ, ով ունի բարձր դիրք:

Այսպիսով **սոցիալականացումն** անձի ձևավորման գործընթացն է սոցիալական որոշակի պայմաններում, որի ընթացքում մարդը հարստացնում է սոցիալական փորձը՝ յուրացնելով վարքի այնպիսի նորմեր ու կանոններ, արժեքներ, որոնք ընդունված են տվյալ հասարակության մեջ կամ սոցիալական խմբում:

Սոցիալականացումը մարդու փոխգործակցությունն է շրջակա միջավայրի հետ, որը ենթադրում է սոցիալական նորմերի և մշակութային արժեքների յուրացում և վերարտադրում, ինչպես նաև անձի ինքնազարգացում և ինքնաիրացում այն հասարակության մեջ, որին ինքը պատկանում է: Այդ գործընթացը տեղի է ունենում շրջակա միջավայրի հետ մարդու տարերային փոխգործակցության պայմաններում, ինչպես նաև նպատակասլաց, մանկավարժական առումով կազմակերպված դաստիարակության ընթացքում: Սոցիալականացման էությունը կայանում է նրանում, որ նա ձևավորում է մարդուն՝ որպես այն հասարակության անդամի, որին նա պատկանում է: Այն երկկողմ գործընթաց է, որը մի կողմից ներառում է իրեն, անհատի կողմից սոցիալական փորձի յուրացում է սոցիալական միջավայրի մեջ մտնելու ճանապարհով, սոցիալական կապերի համակարգ, մյուս կողմից անհատի կողմից իր ակտիվ գործունեության, սոցիալական միջավայրում ընդգրկման հաշվին սոցիալական կապերի վերարտադրություն: Սոցիալականացումը հանդես է գալիս որպես սոցիալական կյանքի ինքնակարգավորման մեխանիզմի տարր, ապահովում սոցիումի պահպանումն ու զարգացումը: Ընդ որում մարդը ոչ միայն հարստանում է

փորձով, այլև իրացնում է իրեն որպես անձ ՝ ազդելով կենսապայմանների և շրջակա մարդկանց վրա: Այն բանից, թե ինչպես է անհատը դառնում սոցիալական կազմակերպության տարր, ներառվում հասարակության մեջ, կախված է մի կողմից անձի վրա ազդելու սոցիալական կազմակերպվածության ընդունակության ձևավորումը, մյուս կողմից՝ այլ մարդկանց ազդեցությանը ենթարկվելու անձի ընդունակության ձևավորումը:

Հասարակությունը, հանդիսանալով բարդ համակարգ, ենթադրում է յուրաքանչյուր անձի մասնակցություն կախյալ ենթակառուցվածքների (քաղաքական ու տնտեսական հարաբերությունների, սոցիալական խմբերի, հասարակական հաստատությունների ոլորտում և այլն) գործունեության ու հաղորդակցման մեջ: Դա որոշում է մարդու սոցիալական դերերի և սոցիալական դիրքորոշումների բազմազանությունը: Խոսելով մարդու սոցիալացման մասին՝ մենք նկատի ենք առնում ամենից առաջ անձի կողմից այդ դերերի ամբողջության իրականացման նախապատրաստության ձևավորումը, դրանց յուրացումը:

Գիտության մեջ կա երկու մոտեցում սոցիալականացման էության ըմբռնմանը, որոնք տարբերվում են սեփական զարգացման գործընթացում մարդու և նրա դերի մասին պատկերացումներով: Այսպես, որոշ ուսումնասիրողներ մատնանշում են, որ սոցիալականացման գործընթացի բովանդակությունը որոշվում է այն բանի համար հասարակության շահագրգռությամբ , որ նրա անդամները հաջողությամբ տիրապետեն հասարակական դերերին, կարողանան մասնակցել արտադրական գործունեությանը, ստեղծեն ամուր ընտանիք, լինեն օրինապահ քաղաքացիներ և այլն: Դա մարդուն բնութագրում է որպես սոցիալականացման օբյեկտ: Սոցիալականացումը գործընթաց է, որը երեխային հնարավորություն է տալիս զբաղեցնել իր տեղը հասարակության մեջ, նորածնի առաջընթաց սոցիալական վիճակից դեպի կյանք՝ որպես հասարակության լիարժեք անդամ:

Սոցիալականացման գործընթացում լուծվում են երկու խումբ խնդիրներ ՝ անձի սոցիալական հարմարման և սոցիալական ինքնավարացման: Ըստ էության հակասական և միաժամանակ դիալեկտիկորեն միասնական այդ խնդիրների լուծումն էապես պայմանավորված է արտաքին ու ներքին շատ գործոններով: Սոցիալական հարմարումը ենթադրում է անհատի ակտիվ ընտելացում հասարակական միջավայրի

պայմաններին, իսկ սոցիալական ինքնավարացումը՝ դեպի իրեն կողմնորոշումների ամբողջության իրացումը, կայունությունը վարքագծում և հարաբերություններում, ինչը համապատասխանում է իր ինքնագնահատականի մասին անձի պատկերացմանը: Սոցիալական հարմարման և սոցիալական ինքնավարացման խնդիրների լուծումը կարգավորվում է «լինել բոլորի հետ» և «մնալ ինքն իր հետ» թվացյալ հակասական դրդապատճառներով: Անտարակույս, մարդու սոցիալականացման արդյունքը նույնպես հասարակական ակտիվությունն է՝ սոցիալական գործունեության իրականացվող պատրաստակամությունը, որը դրսևորվում է մարդու հասարակական հարաբերությունների ոլորտներում: Այսպիսով մարդու սոցիալականացման մասին վկայող չափանիշներն են սոցիալական հարմարվածությունը, սոցիալական հարմարվողականությունը, սոցիալական ինքնավարությունը և սոցիալական ակտիվությունը:

Սոցիալականացման գործընթացը ենթադրում է նշված բոլոր երեք՝ գործունեության հաղորդակցման ինքնաճանաչման ոլորտների փոփոխությունների միասնությունը[4]:

Ընտանեկան դերերը բոլոր այն սոցիալական դերերն են, որոնք անձինք կատարում են՝ ի հետևանք այն բանի, որ ունեն ընտանիք և այնտեղ որոշակի դիրք են զբաղեցնում: Այդտեղ «ընտանեկան դեր» հասկացությունն ընդհանուր բնույթ ունի: Ընդհանրապես ընտանեկան դերերը կարելի է բաժանել երկու խմբի՝ ներընտանեկան դերեր և միջընտանեկան դերեր:

Ներընտանեկան են այն կարգավիճակներն ու դերերը, որ ընտանիքի անդամներն ստանձնում են միայն այդ ընտանիքի անդամների հետ փոխգործունեության մեջ մտնելիս: Դրանք են ամուսնական դերերը (կին և տղամարդ), ծնողական դերերը (հայր և մայր), զավակների դերերը (տղա, աղջիկ, եղբայր, քույր): Ընտանիքի զավակների այդ դերերը միակն են, քանի դեռ նրանք սեփական ընտանիքներ չեն ստեղծել և նոր դերեր չեն ստանձնել: Այսինքն, դրանք այն կարգավիճակներն ու դերերն են, որ ունեն բջջային ընտանիքի անդամները: Այն դեպքում, երբ գործ ունենք ընդլայնված և նահապետական ընտանիքների հետ,

[4] Кон И. С., Социология личности, Москва, 1966, стр. 55.

պարզվում է, որ կան նաև պապի և տատի, մորաքրոջ, մորեղբոր և այլ դերեր, կախված այն բանից, թե ընտանիքն ինչ չափով է ընդլայնված բջջային ընտանիքի համեմատությամբ: Հասարակության մեջ ընտանիքները հազվադեպ են լիովին մեկուսացված լինում ավելի լայն՝ այսպես կոչված սոցիետալ միջավայրից: Մարդիկ ունեն ազգակցական կապեր, որոնց մի զգալի մասն ընտանիքի հոգեբանության սահմաններում կարելի է դիտել որպես այնպիսիք, որոնք ծնում են հատուկ տեսակի՝ միջընտանեկան դերեր: Օրինակ, որևէ անձի կողմից կատարվող հորաքրոջ դերը, եթե ինքն ունի իր առանձին ապրող բջջային ընտանիքը, միջընտանեկան դեր[5] :

Ընտանեկան դերերի ծագումը և կապը ինքնագիտակցության հետ: Զույգի ամուսնությունը գրանցելուց անմիջապես առաջ, այդ արարողակարգի ընթացքում և դրանից անմիջապես հետո սոցիալականացնող «գործակալները» (ծնողներ և այլ ազգականներ, պաշտոնական մարմնի աշխատողներ) նրանց սովորեցնում են այդ դերերը՝ փաստորեն իրականացնում են նրանց դերային սոցիալականացումը: Դրանից հետո, երբ այդ ընտանիքում երեխա է ծնվում, նա իր կարգավիճակն ու դերը ստանում է ինքնաբերաբար, թեև պետությունն օրենք է սահմանել երեխաների գրանցման և ծննդյան վկայական տալու մասին: Այդ կերպ ևս երեխայի սոցիալական կարգավիճակն ու դերը պաշտոնական են դառնում: Նա՝ որպես քաղաքացի, ինչ-որ չափով գտնվում է պետության և օրենքների հովանավորության ու պաշտպանության ներքո: Այսքանով ընտանեկան կարգավիճակների և դերերի ձևավորումը դեռևս չի ավարտվում: Այն անընդմեջ և երկարատև գործընթաց է[6]: Ներընտանեկան կարգավիճակադերային սոցիալականացումն ընթանում և շարունակվում է մինչև նրա անդամների կյանքի ավարտը: Երբ ծնվում է երկրորդ երեխան, ապա ծագում են նոր կարգավիճակներ և դերեր (եղբայր, քույր, դուստր, որդի): Այդ նոր կրագավիճակների և համապատասխան դերերի մասին ևս էթնոմշակութային յուրաքանչյուր միջավայրում գոյություն ունեն պատկերացումներ, որոնք ինչ-որ չափով հայտնի են դառնում այդ դերակատարումներին, և նրանք սկսում են գործել հենց այդ պատկերացումներին

[5]Левитов Н. Д., Теория ролей в психологии, “Вопроси психологии’’, Москва, 1969, стр. 52.
[6] Նալչաջյան Ա.Ա., Սոցիալական հոգեբանություն, Երևան, 2004, էջ 90:

համապատասխան։ Դերակատարման ուսուցումն և յուրացումը տևում է երկար տարիներ։ Օրինակ, տղամարդը ողջ կյանքի ընթացքում կարող է սովորել կատարել «իսկական հոր» դերը, կինն այդպես սովորում է «իսկական մոր» դերակատարությունը, իսկ տղան սովորում է, թե տվյալ հասարակության մեջ ինչպիսին պետք է լինի իսկական որդին։

Այսպիսով, յուրաքանչյուր անձի ներընտանեկան դերը մտնում է նրա իդեալական Ես-հայեցակարգի կազմի մեջ՝ որպես նրա կարևոր ենթահամակարգերից մեկը։

Վերոնշյալ իմաստով գոյություն ունեն միջընտանեկան իդեալական դերեր, այսինքն՝ պատկերացումներ այն մասին, թե ինչպիսին պետք է լինեն իսկական հայրը և մայրը, իսկական մորաքույրը, իսկական հորեղբայրը և այլն։ Այդ հոգեբանական կազմավորումները նույնպես մտնում են անձի իդեալական Ես-հայեցակարգի կազմի մեջ։ Առաջադրված վարկածները կարևոր են ոչ միայն ընտանիքի սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները ճիշտ հասկանալու համար, այլև դրանք թույլ են տալիս ավելի հստակ պատկերացում կազմել անձի ինքնագիտակցության, իդեալական Ես-ի կառուցվածքային բաղադրիչների վերաբերյալ։

Ընտանիքի հիմնական գործառույթները

Ժամանակակից բջջային և ընդլայնված ընտանիքների հիմնական գործառույթները բաժանվում են հետևյալ երեք խմբերի՝

1. ներքին (ներընտանեկան) գործառույթներ
2. արտաքին գործառույթներ
3. երկակի նշանակության գործառույթներ։

Ներքին գործառույթներն ընտանիքի այն գործառույթներն են, որոնք ծառայում են երկու հիմնական նպատակի՝

ա) իր՝ որպես սոցիալական խմբի, պահպանմանն ու ամրապնդմանը,

բ) իր անդամների պահանջմունքների բավարարմանը։

Ընտանիքի արտաքին գործառույթները ծագում են տվյալ ընտանիքի՝ այլ ընտանիքների և ավելի լայն հասարակության հետ ունեցած հարաբերություններում։

Այս գործառույթի ծագման պատճառը այն է, որ յուրաքանչյուր ընտանիք ծառայում է ոչ միայն ինքն իրեն, այլև հասարակությանը, քանի որ այդ մեծ ամբողջության մի «բջիջն» է: ԸՆտանիքն ունի ներքին գործառույթներ, բայց միաժամանակ, որպես հասարակական ենթահամակարգ՝ ունի նաև արտաքին սոցիալական գործառույթներ: Այս ամենի ընդհանրացումից.

1. ընտանիքի գործառույթներն փոխկապակցված են,
2. դրանք միավորվում են ընտանիքի կարգավիճակի և այն դերերի մեջ, որոնք այդ խմբի կողմից կատարվում են հասարակության մեջ,
3. յուրաքանչյուր գործառույթ յուրահատուկ դերային սպասում է,
4. յուրաքանչյուր գործառույթ՝ որպես դերային սպասում, հնարավոր է և գոյություն ունի շնորհիվ այն բանի, որ խումբն ունի կառուցվածք և մի շարք այլ հատկություններ,
5. որքան ավելի բարդ է ընտանիքը՝ որպես սոցիալական խումբ (ունի մեծաթիվ անդամներ և ավելի շատ ու բազմազան միջդերային կապեր), այնքան ավելի մեծաթիվ են նրա սոցիալակն դերերը և հետևաբար՝ նաև հասարակության մեջ նրա կատարած գործառույթները:

Ընտանիքի հիմնական ներքին գործառույթներ

- Երեխա ունենալու (մանկածնության) և մոր ու հոր դերերը կատարելու ցանկության բավարարումը:
- Երեխաների սննդով ապահովելը, խնամքը, դաստիարակությունը և ներընտանեկան սոցիալականացումը: Այստեղ առանձնապես կարևոր է երեխայի դերային սոցիալականացումը, թեև իրենք՝ ծնողներն էլ են ապրում նոր դերային սոցիալականացման գործընթաց:
- Մեծ հասարակության մեջ կատարելիք հասուն դերերին նախապատրաստումը:
- Սոցիալ-հոգեբանական հարմարավետ վիճակի և պաշտպանվածության ապահովումը, ընտանիքի յուրաքանչյուր անդամի զարգացման և հասունացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը:
- Ընտանիքի յուրաքանչյուր անդամի դրական ինքնագիտակցության ձևավորումն ու պահպանումը:

- Շփվելու, հաղորդակցվելու պահանջմունքի բավարարումը (ծնողների և ընտանիքի մյուս անդամների հետ)։
- Ընտանիքի անդամների փոխադարձ սոցիալական վերահսկողությունն ու վարքի կարգավորումը։
- Համատեղ հանգստի իրականացումը։
- Ընտանիքի անդամների միջև ծագող բախումների լուծումը՝ նրա մյուս անդամների կողմից, նրանց միջամտությամբ և օգնությամբ։
- Համատեղ ապրելակերպի և կենցաղի կազմակերպումը։

Ընտանիքի հիմնական արտաքին գործառույթներ

- Հասարակության մշակույթի կուտակումը, պահպանումն ու փոխանցումը սերնդեսերունդ։
- Երեխաներին նախապատրաստում՝ հասուն սոցիալական դերերի կատարմանը։
- Ընտանիքի անդամների մասնակցությունը պետական կառավարման, երկրի պաշտպանության, տնտեսության, մշակույթի, կրթության, գիտության և հասարակական կյանքի այլ ոլորտի զարգացման գործին։

Ընտանեկան կոնֆլիկտների հիմքում ընկած է ամուսինների նպատակների և հետաքրքրությունների օբյեկտիվ տարբերությունները, որը հարաբերություններում ընդունվում է որպես հակադրություն[7]։ Սոցիալ-հոգեբանական հետազոտությունները հնարավորություն են տալիս առանձնացնել ընտանեկան կյանքում առաջացող կոնֆլիկտների 4 տեսակ.

1. Ներանձնային- պետք է նշել, որ այն մարդը, որն ունի ներքին կոնֆլիկտներ, հաճախ սխալ է գնահատում շրջապատի մարդկանց և տեղի ունեցող իրադարձությունը։ Արդյունքում տեղի է ունենում հոգեբանական ճնշում և հնարավոր է ներանձնային կոնֆլիկտը վերափոխվի միջանձնային կոնֆլիկտի։

2. Միջանձնային-կոնֆլիկտը ծագում է 2 կամ ավելի մարդկանց միջև։ Միջանձնային կոնֆլիկտն առաջանում է մարդկանց համատեղ աշխատանքի ժամանակ և ծագում

[7] Սեդրակյան Ս.Ա., Հարությունյան Ն.Ա., Ներընտանեկան կոնֆլիկտների առաջացման պատճառները և հաղթահարման ուղիները, Երևան, 2001, էջ 59։

հակադրությունների լուծման ժամանակ։ Նման կոնֆլիկտի լուծումը կախված է մարդկանց զարգացման մակարդակից։

3. Անհատական-խմբային կոնֆլիկտը առաջանում է այն ժամանակ, երբ անհատի նպատակը, վարքը չի համապատասխանում խմբի նորմերին։

4. Միջխմբային կոնֆլիկտ-այս դեպքում կարող է տեղի ունենալ բախում տարբեր խմբերի նպատակների, վարքի միջև։ Կոնֆլիկտային գործունեության հիմքում ընկած են՝

ա) գործունեության բնույթը (հարձակվողական, պաշտպանողական, չեզոք)

բ) ակտիվության կոնֆլիկտներ (սիրո կորուստ, կապվածություն, կոպտություն, խանդը, կյանքին տարբեր հայացքներով նայելը)

գ) ներքին կոնֆլիկտ (դավաճանություն, մեկ այլ մարդու հանդեպ նոր զգացում)։ Ընտանեկան կյանքը մի ամբողջ գիտություն է, որը շատ բարդ է և անընդհատ զարգացող, քանի որ երկու ճակատագրեր միացել են և դարձել ընդհանուր երկու աշխարհներ։ Անհրաժեշտ է ապրել ընդհանուր հոգսերով, հաջողություններով[8]։

Ընտանիքի յուրահատկություններից մեկն այն է, որ մի քանի մարդ ամենասերտ փոխհարաբերությունների մեջ են լինում երկարատև ժամանակահատվածում, մի քանի տասնյակ տարիների ընթացքում։ Նման ինտենսիվ փոխազդեցության համակարգում դժվար է գոյակցել առանց վեճերի, կոնֆլիկտների, և ճգնաժամերի։ Ընտանիք կազմելուց հետո սկսվում է ամուսնական առօրյան իր հոգսերով, ամուսինների միջև կարող են առաջանալ նաև հակասություններ, կոնֆլիկտներ, որոնք առաջ են բերում ներընտանեկան անբարենպաստ փոխհարաբերություններ։ Այդ կոնֆլիկտները կարող են վերաբերվել ամուսնական կյանքի տարբեր կողմերին, դրամին, հետաքրքրություններին, բարեկամներին, ազգականներին, երեխաներին և այլն։ Ներընտանեկան անբարենպաստ փոխհարաբերությունների առաջացման հիմնական և ավելի հաճախ հանդիպող պատճառներից մեկը կոնֆլիկտներն են ընտանիքի անդամների միջև։ Ընտանիքի անդամների միջև միշտ առկա է պայքար հանուն իշխանության, հանուն որոշումներ կայացնելու իրավունքի։ Օրինակ, ծնողի և երեխայի միջև որոշակի պայքար է առաջանում, թե տարբեր

[8] Նույն տեղում, էջ 63։

խնդիրների շուրջ ով է վճիռ կայացնելու[9]: Միջամուսնական կոնֆլիկտների առաջացումն ավելի հավանական է դառնում հետևյալ պայմանների առկայության դեպքում կամ հետևյալ պատճառներով.

1.սեփական ես-ի նշանակալիության, կարևորության պահանջմունքի, չբավարարվածության, ամուսիններից մեկի սոցիալական դիրքի ցածրացում,

2. դրական հույզերի, պահանջմունքի, չբավարարվածության, քնքշանքի հասկանալու և փոխըմբռնման բացակայության և այլն,

3. ցածր կրթամակարդակ

4. աշխատանքի բացակայություն և ֆինանսական դժվարություններ

5. կախվածություն ծնողների ընտանիքներից:

[9] Biddle B. J., Role theory. Expectations, Identities and Behaviors. New York: Academic Press, 1979, p. 48.

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԸՆՏԱՆԻՔ-ԴՊՐՈՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

ԸՆՏԱՆԻՔ-ԴՊՐՈՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՈԴԵԼԸ

Երեխայի հետազոտման, նրա լավագույն որակների և հատկությունների բացահայտման ու զարգացման հարցերում դպրոցի և ընտանիքի փոխներգործության շարժառիթն այդ կառույցների ընդհանուր հետաքրքրություններն են: Այդպիսի փոխհարաբերությունների հիմքում միմյանց նկատմամբ վստահության, փոխադարձ հարգանքի, փոխօգնության և օժանդակության, համբերատարության սկզբունքներն են: Դրանք օգնում են ուսուցիչներին և ծնողներին՝ համատեղ ջանքերով երեխայի ինքնորոշման, ինքնակառավարման, խոչընդոտների ու դժվարությունների հաղթահարման համար անհրաժեշտ որակների ու հատկությունների ձևավորման պայմաններ ստեղծել: Երեխաներին, ծնողներին և ուսուցիչներին միավորում են ընդհանուր մտահոգություններն ու խնդիրները, որոնց լուծումներն էապես պայմանավորված են դրանց փոխներգործության և համագործակցության բնույթով: Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը նպատակասլաց և երկարատև աշխատանք է, որն ամենից առաջ ենթադրում է ընտանիքի , երեխայի ընտանեկան դաստիարակության պայմանների ու յուրահատկությունների բազմակողմանի և համակարգված ուսումնասիրություն: Այդ երկու ինստիտուտների համագործակցությունը և փոխներգործությունը մանկավարժական գործընթացի բոլոր փուլերում պետք է կազմակերպվեն պլանավորված ու համակարգված ձևով: Ծնողները և ուսուցիչները նույն երեխաների դաստիարակներն են: Հետևաբար դաստիարակությունն արդյունավետ կլինի միայն նրանց համագործակցության պայմաններում, երբ ձևավորվեն դաստիարակության գործընթացի միասնական նպատակներ, ձգտումներ ու հայացքներ, համատեղ ուժերով մշակվեն դաստիարակչական խնդիրներն ու դրանց լուծման ուղիները:

Երեխայի սոցիալականացումը ցանկացած մանկավարժի գործունեության ռազմավարական նպատակն է, քանզի ուսուցման ընթացքում ձեռք բերած գիտելիքները կարելի է դիտել որպես հիմք մարդու սոցիալական կայացման համար:

Այդ առումով մենք կարող ենք ասել, որ գիտության մակարդակի արտացոլման հետ մեկտեղ կրթության բովանդակություն որոշման հիմքում պետք է ընկնի ձեռք բերված գիտելիքների պիտանիությունն ապագայում: Եթե աշակերտը չդառնա պատմության բնագավառի մասնագետ, ապա ավարտական քննության հանձնումից հետո նա շուտով կմոռանա շատ սերտած պատմական տարեթվեր, սակայն պատմական երևույթների սոցիալական հնչողությունը, հենց աշակերտի տված դրանց գնահատականը մեծապես կազդեն նրա սոցիալական վարքագծի, շրջակա հասարակական երևույթներին վերաբերմունքի վրա: Հազիվ թե իրենց համար մաթեմատիկայի ուսումնասիրման հետ մասնագիտություն ընտրած աշակերտներն ամբողջ կյանքում հիշեն դպրոցում սովորած մաթեմատիկական բոլոր բանաձևերը, սակայն կենցաղային հիմնախնդիրների վերլուծության հետ կապված հենքային գիտելիքները նրանց պետք կգան ամբողջ կյանքում: Ասվածը չի նշանակում, որ կրթության բովանդակությունը պետք է հասարակացվի մինչև հրատապ կենցաղային պահանջմունքների մակարդակի: Այն պետք է սովորողների մոտ ձևավորի ճանաչողական գործունեության դրդապատճառներ, մտածողության տրամաբանություն, մարդասիրական աշխարհայացք, որոնք կազմում են մարդու սոցիալական հասունության հիմքը:

Երեխայի սոցիալականացման վրա էականորեն ազդում է նաև մանկավարժների, ծնողների ու այլ երեխաների հետ հարաբերությունների բնույթը: Այդ առումով կարևոր է մանկավարժական միջոցների, սոցիալականացման տեխնոլոգիաների ճիշտ ընտրությունը, որը մի կողմից օգնում է երեխային ինքնահիրացվել, մյուս կողմից՝ յուրացնել սոցիալական փորձը և համապա-տասխանաբար սահմանել իր վարվելակերպը սոցիալական ու մանկավարժական փոխգործակցության կառուցվածքում:

Այսպիսով կրթությունը, սոցիալականացումը, դաստիարակությունն ու զարգացումը ներազդում են անհատի վրա՝ նույն հասարակության մեջ լրիվ ինքնահիրացման նպատակով: Ընդ որում զարգացումն ուղղված այն բանին, ինչն արդեն հատուկ է անհատին, իսկ դաստիարակությունը դրանից զատ ուղղված այն բանին, ինչ ինքը չունի, ինչը տրված է հասարակական բարոյականության մեջ, մարդկանց բարոյական նորմերում և որակներում: Զարգացումը, սոցիալականացումը և

դաստիարակությունը կազմում են անձի ձևավորման էությունը, դրանք փոխադարձաբար կապված գործընթացներ են, որոնց վրա էապես կարող է ազդել մանկավարժական գործունեությունը:

Ուսուցիչների և ընտանիքի փոխներգործության բնույթը պլանավորված է դպրոցի նկատմամբ ծնողների վերաբերմունքով, ինչպես նաև այն հանգամանքով, թե վերջիններս, ըստ իրենց իմացական կարողությունների, հայացքների ու դիրքորոշումների, որտեղ են իրենց տեսնում դաստիարակության գործընթացում: Դպրոցի և ծնողների համագործակցության հիմքը խմբային ու անհատական աշխատանքի ձևերն են[10]:

Միաժամանակ կան հիմնախնդիրներ, որոնք մտահոգում են բոլոր ծնողներին կամ էլ կապված են դասարանում երեխաների դաստիարակության գործընթացի հետ: Այդպիսի հարցերը քննարկվում են ընդհանուր ժողովների ժամանակ: Ծնողական ժողովը ծնողների հետ աշխատանքի հիմնական ձևն է, որի միջոցով լուծվում են օրակարգային համարվող խնդիրները և ամրապնդվում ուսուցիչ-ծնող կապը:

Այսպիսով, դպրոցի և ընտանիքի համագործակցության և փոխներգործության ամենաարդիական և պահանջված ուղղություններից մեկն այսօր, թերևս երեխաների ծնողների համար խորհրդատվությունների կազմակերպումն է:

Մանկավարժական խորհրդատվությունները հիմնականում կրում են անհատական բնույթ: Դրա անհրաժեշտությունը ծագում է այն ժամանակ, երբ իրավիճակը դառնում է ծայրահեղ, ու պահանջվում է արտակարգ օգնություն: Այս փուլում գլխավոր խնդիրը ոչ միայն մանկավարժական տեղեկատվությամբ ընտանիքն ապահովելն է, այլև ծնողներին հուզական աջակցություն ցույց տալը:

Այսպիսով մանկավարժները և ծնողները ունեն ընդհանուր նպատակներ և առանց նրանց համագործակցության՝ երեխայի կյանքը լիարժեք չէ: Դպրոցը երեխային տալիս է գիտական գիտելիքներ և իրականության նկատմամբ դաստիարակում գիտակցական վերաբերմունք: Ընտանիքն էլ իր հերթին ապահովում է կյանքի պրակտիկ փորձը: Ընտանիքում ձևավորվում և մշակվում են մարդկանց

[10] Բեջանյան Ա.Տ., Ընտանիքի և դպրոցի գործընկերային փոխազդեցությունը որպես կարևոր պայման երեխայի ներդաշնակ զարգացման գործում, Երևան, 2016, էջ 15:

կարեկցելու կարողությունը: Անձի ներդաշնակ զարգացման համար այդ երկու որակներն էլ խիստ անհրաժեշտ են: Փորձենք այս ամենն արտացոլել սխեմայում.

Ընտանիք-դպրոց համագործակցության մոդել

ԱՇԱԿԵՐՏ

1	2	3
Երեխային ճանաչելու և նրա կարիքները համատեղ բացահայտելու գործընթացի իրականացում	Ծնողների և երեխաների կարիքների հիման վրա ծնողական լուսավորության ծրագրի մշակում և իրականացում	Երեխաների անվտանգության ապահովում և իրավունքների պաշտպանության ոլորտում սերտ համագործակցության ապահովում
4	5	6
Երեխայի ուսումնաճանաչողական ձեռքբերումների համատեղ քննարկում	Արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների համատեղ գործունեության պլանավորում և իրականացում	Դպրոցի զարգացման ծրագրերի մշակման ու իրականացման գործում ծնողական համայնքի մասնակցության ապահովում

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը նպատակասլաց և երկարատև աշխատանք է, որն ամենից առաջ ենթադրում է ընտանիքի , երեխայի ընտանեկան դաստիարակության պայմանների ու յուրահատկությունների բազմակողմանի և համակարգված ուսումնասիրություն: Այդ երկու ինստիտուտների համագործակցությունը և փոխներգործությունը մանկավարժական գործընթացի բոլոր փուլերում պետք է կազմակերպվեն պլանավորված ու համակարգված ձևով: Ծնողները և ուսուցիչները նույն երեխաների դաստիարակներն են: Հետևաբար դաստիարակությունն արդյունավետ կլինի միայն նրանց համագործակցության պայմաններում, երբ ձևավորվեն դաստիարակության գործընթացի միասնական նպատակներ, ձգտումներ ու հայացքներ, համատեղ ուժերով մշակվեն դաստիարակչական խնդիրներն ու դրանց լուծման ուղիները:

Հետազոտական աշխատանքի արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ մանկավարժները և ծնողները ունեն ընդհանուր նպատակներ և առանց նրանց համագործակցության՝ երեխայի կյանքը լիարժեք չէ: Դպրոցը երեխային տալիս է գիտական գիտելիքներ և իրականության նկատմամբ դաստիարակում գիտակցական վերաբերմունք: Ընտանիքն էլ իր հերթին ապահովում է կյանքի պրակտիկ փորձը: Ընտանիքում ձևավորվում և մշակվում են մարդկանց կարեկցելու կարողությունը: Անձի ներդաշնակ զարգացման համար այդ երկու որակներն էլ խիստ անհրաժեշտ են:

Այսուհանդերձ, ընտանիքի հոգեբանական բնութագրի, ծնող-երեխա համագործակցության և ծնող-աշակերտ-ուսուցիչ հարաբերությունների առկայությունը ապահովում է կրթության «կայացած» համակարգը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Բեջանյան Ա.Տ., Ընտանիքի և դպրոցի գործընկերային փոխազդեցությունը որպես կարևոր պայման երեխայի ներդաշնակ զարգացման գործում , Երևան, 2016:
2. Նալչաջյան Ա.Ա., Սոցիալական հոգեբանություն, Երևան, 2004:
3. Սեդրակյան Ս.Ա., Դերերի տեսությունը և ընտանիքի հոգեբանության խնդիրներին դերային մոտեցման էությունը, Երևան, 2010:
4. Սեդրակյան Ս.Ա., Ընտանիքի հոգեբանություն, Երևան, 2011:
5. Սեդրակյան Ս.Ա., Հարությունյան Ն.Ա., Ներընտանեկան կոնֆլիկտների առաջացման պատճառները և հաղթահարման ուղիները, Երևան, 2001:
6. Кон И. С., Социология личности, Москва, 1966.
7. Левитов Н. Д., Теория ролей в психологии, “Вопроси психологии”, Москва, 1969.
8. Торохтий В. С., Психологическое здоровье семьи и пути его изучения долголетие//Вестник психосоциальной и коррекционно-реабилитационной работы, 1996, № 3.
9. Biddle B. J., Role theory. Expectations, Identities and Behaviors. New York: Academic Press, 1979.